ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հաշվետվություն

2025

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ

ՀԲՄ նախագահի ուղերձ էջ 3

Ընդհանուր ակնարկ էջ 5

2025թ. Հայաստանի բանկերի միության կողմից կատարված աշխատանքներ էջ 8

Հայաստանի բանկային համակարգը թվերով էջ 35

Հարգելի ընթերցող,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) 2025թ. տարեկան հաշվետվությունը, որը ներկայացնում է հաշվետու տարվա ընթացքում իրականացված գործունեության հիմնական ուղղությունները, արձանագրված արդյունքները, ինչպես նաև բանկային համակարգի գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

2025 թվականը Հայաստանի բանկերի միության համար հոբելյանական էր. լրացավ Միության հիմնադրման 30-ամյակը: Այս կարևոր հանգրվանը դարձավ ոչ միայն անցած ճանապարհը գնահատելու, այլև մեր դերակատարումը վերարժևորելու և զարգացման նոր նպատակներ սահմանելու առիթ:

Հոբելյանական տարվա շրջանակում Հայաստանի բանկերի միությունը կազմակերպեց միջազգային Բանկային ֆորում՝ համախմբելով շուրջ 500 մասնակից տասնյակ երկրներից: Քննարկվեցին թվայնացման, կիբերանվտանգության և բանկային համակարգի զարգացման հիմնական ուղղությունները:

Անցնող տարում ՀԲՄ գործունեությունն ուղղված է եղել բանկերի շահերի պաշտպանությանը՝ կենտրոնական բանկի և կառավարության հետ բանկային համակարգին հուզող հարցերի և խնդիրների շարունակական ներկայացումը: ՀԲՄ գործունեության առանցքում է եղել նաև բանկերի միջև համագործակցության խորացումը, ֆինանսական գրագիտության և հանրության կողմից բանկային համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը միտված աշխատանքները, միջազգային գործընկերությունների ընդլայնմանը, ինչպես նաև ֆինանսական համակարգի կայուն զարգացմանը նպաստող նախաձեռնությունների իրականացմանը:

2025թ. ընթացքում ֆինանսական զեղծարարությունների կանխարգելումը շարունակել է մնալ բանկային համակարգի կարևոր առաջնահերթություններից մեկը: Արձագանքելով աճող ռիսկերին՝ Հայաստանի բանկերի միությունը մեկնարկել է նախապատրաստական աշխատանքներ՝ 2026թ. հանրային իրազեկման արշավի իրականացման նպատակով:

ՀԲՄ ուսումնական և որակավորման կենտրոնը 2025 թվականին շարունակել է զարգանալ՝ ընդլայնելով ծրագրերի շրջանակը և ամրապնդելով իր դիրքը որպես ոլորտի մասնագիտական կրթության առաջատար հարթակ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք մասնագիտական ֆորումներ, քննարկումներ և հանդիպումներ՝ Ազգային Ժողովի, Կառավարության, Կենտրոնական բանկի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս հարթակներում բարձրաձայնվել են ոլորտի զարգացման առաջնահերթությունները, ներկայացվել են համագործակցության նոր հնարավորություններ և խթանվել է փորձի փոխանակումը:

2025 թվականը Հայաստանի բանկային համակարգի համար առանձնացավ տեխնոլոգիական առաջընթացի և ֆինանսական կայունության ամրապնդման միտումներով: Բանկային համակարգը պահպանեց իր դիրքը որպես երկրի տնտեսության առանցքային և վստահելի հենասյուներից մեկը՝ գործելով թափանցիկ, մրցակցային և կարգավորված միջավայրում:

Հաշվետու տարում բանկերը շարունակեցին ապահովել կայուն աճ հիմնական ցուցանիշների մասով՝ ընդլայնելով ֆինանսական ծառայությունների հասանելիությունը, ներդնելով նորարարական լուծումներ և բարձրացնելով հաճախորդամետության մակարդակը: Համակարգի ճկունությունն ու փոփոխություններին արագ արձագանքելու կարողությունը, միջազգային չափանիշներին համահունչ գործելաոճը և թվայնացման կայուն առաջընթացն էապես բարձրացրին համակարգի հանդեպ վստահության մակարդակը:

Ամփոփելով 2025 թվականը՝ կարող ենք վստահաբար նշել, որ Հայաստանի բանկային համակարգը շարունակում է իր զարգացման և արդիականացման ուղին՝ ամրապնդելով կայունությունը և մեծացնելով իր դերակատարությունը երկրի տնտեսական առաջընթացում:

ՀԲՄ-ն, հավատարիմ իր առաքելությանը, շարունակելու է նպաստել բանկային համակարգի արդյունավետ գործունեությանը, միջազգային ինտեգրմանը և նորարարական լուծումների ներդրմանը՝ ստեղծելով համագործակցության, գաղափարների և առաջադեմ փորձի փոխանակման հուսալի հարթակ:

Հարգանքով,

Դանիել Ազատյան
Հայաստանի Բանկերի Միության նախագահ

Ընդհանուր ակնարկ

Հայաստանի բանկերի միությունը (ՀԲՄ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է, որը ստեղծվել է բանկերի Հիմնադիր ժողովի 1995թ. հուլիսի 27-ի թիվ 1 որոշման համաձայն:

Ներկայումս ՀՀ-ում գործող բոլոր 17 առևտրային բանկերը ՀԲՄ անդամ են: Միությունն իրավաբանական անձ, ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է, որի գործունեության հիմնական նպատակն է բանկերի շահերի պաշտպանությունը:

Հայաստանի բանկերի միությունը ՀՀ բանկերի ընդհանրական շահերի պաշտպանության, համակարգային խնդիրների կարգավորման, բանկային համակարգի զարգացման ու բարի համբավի առավել բարձրացման հիմքերի կատարելագործման նպատակով, օգտագործելով համագործակցության, մասնագիտական կարողությունների զարգացման, վերլուծության, ներկայացուցչականության և երկխոսության մեխանիզմներն, ապահովում և ամրապնդում է բանկերի, պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և հանրության միջև փոխըմբռնման և վստահության վրա հիմնված հարաբերությունները:

Սույն հաշվետվությամբ ներկայացվում է ինչպես 2025թ. ընթացքում Հայաստանի բանկերի միության գործունեությունն ու գրանցած հիմնական արդյունքներն, այնպես էլ բանկային համակարգի գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ու հաշվետու տարվա առանցքային իրադարձությունները:

Մասնավորապես՝ ըստ հիմնական բաժինների անդրադարձ է կատարվում հետևյալ թեմաներին՝

1. ՀՀ բանկերի շահերի պաշտպանության ու բանկային համակարգի կայուն զարգացման ուղղությամբ ընթացիկ օրենսդրական ու կանոնակարգային խնդիրների լուծումների ապահովում:
2. Համագործակցության շարունակական խորացում և ընդլայնում ՀՀ պետական կառավարման համակարգի, քաղաքացիական հասարակության, միջազգային ու մասնավոր հատվածի հետ:
3. Բանկային համակարգում ենթակառուցվածքային ու զարգացման ծրագրերի նախաձեռնում, իրականացման աջակցություն:
4. Հանրային կապերի միջոցով ՀՀ բանկային համակարգի բարի համբավի և ինստիտուցիոնալ դիրքի բարձր նշաձողի ընդհանրական ապահովում ու բարձրացում:
5. Բանկային համակարգին առնչվող խնդիրներին լուծումներ առաջարկելու նպատակով պրոֆեսիոնալ իրագործման հիմքի ապահովում՝ հետազոտությունների ու մեթոդաբանությունների մշակման և միջազգային փորձի ուսումնասիրությունների միջոցով:
6. Բանկային համակարգի մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանը նպաստում:
7. ՀՀ բանկային համակարգը թվերով:

Հաջորդիվ առավել մանրամասն կարող եք ծանոթանալ ՀԲՄ գործունեության 2025թ. արդյունքներին, ինչը մեր թիմի համատեղ և միասնական աշխատանքի արդյունքն է:

ՀԲՄ կառուցվածքը



ՀԲՄ անդամ բանկեր

acba

AMERIABANK

IDBank

AraratBank

Ardshinbank

ARMSWISSBANK

ԱՐՑԱԽԲԱՆԿ
ARTSAKHBANK

BYBLOS BANK
ARMENIA

evocaBANK

INECOBANK

CONVERSE
BANK

BANK
AMIO

AEB
ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

mellat bank

UNIBANK

VTB

FASTBANK

1

2025թ. Հայաստանի բանկերի միության կողմից կատարված աշխատանքներ

Հայաստանի բանկերի միության խորհրդի կողմից առաջադրված ռազմավարական խնդիրների շրջանակում 2025թ. Հայաստանի բանկերի միությունն իր գործունեությունը ծավալել է հետևյալ հիմնական ուղղություններով՝

ՀՀ բանկերի շահերի պաշտպանության ու բանկային համակարգի կայուն զարգացման ուղղությամբ ընթացիկ օրենսդրական ու կանոնակարգային խնդիրների լուծումների ապահովում:

- Տարվա ընթացքում ՀԲՄ-ում քննարկվել են **շուրջ 70 օրենսդրական նախագծեր, այդ թվում՝ շուրջ 10 ԿԲ կանոնակարգային** և կարգավորման ենթակա համակարգային հարցեր:
- ՀԲՄ-ի կողմից կազմակերպվել են **ավելի քան 60 աշխատանքային հանդիպումներ՝** արդյունքում ձևավորվել են միասնական դիրքորոշումներ, որոնք ներկայացվել են համապատասխան մարմիններին:
- Բանկերի կողմից բարձրացված խնդրահարույց հարցերի վերաբերյալ **ավելի քան 50 գրություններ են ուղղվել 20-ից ավելի տարբեր գերատեսչությունների:**
- Ձևակերպվել, ամփոփվել, պատրաստվել և ուղարկվել են մի շարք գրություններ օրենսդիր և գործադիր մարմիններին, պետական և մասնավոր կազմակերպություններին, որոնցում շոշափվել են բանկերին առնչվող զանազան հարցեր, բարձրացվել անհետաձգելի լուծում պահանջող շատ խնդիրներ, մասնավորապես՝
    - Անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման ծրագիր,
    - Պետական աջակցության ծրագրեր,
        - ✓ Գյուղատնտեսության ոլորտի ծրագրեր,
        - ✓ Տարածքային զարգացման ծրագրեր,
        - ✓ Սոցիալական աջակցության ծրագրեր,
        - ✓ Բիզնես աջակցության ծրագրեր
- Հարկային վարչարարության ոլորտի օրենսդրական նախաձեռնություններ,
- Կապիտալի շուկայի օրենսդրական և կարգավորման հարցեր,
- Միասնական հաշվետվողականության ստանդարտի (CRS) ներդրում,
- ՀՀ ԿԲ կարգավորման դաշտ,
- Սոցիալական ապահովության ոլորտի իրավակարգավորող դաշտ,
- Կառուցապատման ոլորտի խնդիրների դաշտ

Համագործակցություն ՀՀ Կառավարության և այլ պետական մարմինների հետ՝ բանկային և տնտեսական ոլորտների զարգացմանն օժանդակող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի ձևավորման գործում, ինչպես նաև բանկերի գործունեությանն առնչվող հիմնախնդիրների լուծման և ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրերի մշակման և իրագործման գործում:

Պետական գերատեսչությունների շրջանակներում նոր, խնդրահարույց կամ խթանող օրենսդրական նախաձեռնությունների քննարկմանը մասնակցություն, խնդրահարույց կարգավորումների կանխում և օրենսդրական բարեփոխումների առաջարկությունների ներկայացում:

Կառավարության հետ բազմիցս քննարկվել են պետական աջակցության ծրագրերին մասնակցության ընթացակարգերի բարդությունների հետ կապված խնդիրները:

Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի և Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի հետ պարբերական քննարկումներ:

Համագործակցություն ՀՀ Արդարադատության նախարարության հետ՝ բանկերին հուզող խնդիրների, մասնավորապես՝ դատական գործընթացների ձգձգման և դատական գործընթացների միջոցով իրավական բացերով ու այլ խնդիրներով պայմանավորված՝ սուբյեկտիվ ելքերի հետ կապված խնդիրներ, սնանկության կարգավորման ու վարչարարության խնդիրներ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն առընչվող խնդիրներ:

Օրենսդրական նախաձեռնություն

Հայաստանի բանկերի միությունը, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում առկա լուրջ խնդիրները, հանդես է եկել օրենսդրական փոփոխության նախաձեռնության առաջարկով, որը հասցեագրված էր ՀՀ արդարադատության նախարարությանը: Նախաձեռնության հիմնական նպատակն էր կարգավորել այն իրավական բացերը, որոնք հնարավորություն են տալիս պարտապաններին չարաշահել դատավարական իրավունքները և հարկադիր կատարման փուլում ձգձգել արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարումը:

Մասնավորապես՝ ներկայացվել էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու նախագիծ՝ նախատեսելով հարկադիր կատարողական գործողությունների և դրանց նկատմամբ ներկայացվող բողոքների քննության համար սեղմ ժամկետների սահմանում: Միությունը ներկայացրել էր նաև հիմնավորող փաստաթղթեր և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներ՝ փաստարկելով, որ առաջարկվող լուծումները կնվազեցնեն չարաշահումների ռիսկերը և կապահովեն արդար դատաքննության ողջամիտ ժամկետների պահպանումը:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀՀ բանկային համակարգի գործունեության զարգացմանը նպաստող, առկա խնդիրները կարգավորող օրենսդրական բարեփոխումների մշակման և ներդրման նպատակով:

Կանաչ ֆինանսների ուղղությամբ ՀՀ կենտրոնական բանկի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն, իրավական բարեփոխումների մշակման աշխատանքներին մասնակցություն, համատեղ սեմինարների կազմակերպում:

Հայաստանի Հանրապետությունում ներկայացված միջազգային կառույցների հետ աշխատաժողովի կազմակերպում՝ վերհանելու ֆինանսաբանկային ոլորտում առկա խնդիրները և գտնելու հնարավոր լուծումները:

Բանկային համակարգի ինքնակարգավորման նախաձեռնություն

ՀԲՄ հովանու ներքո բոլոր առևտրային բանկերը ստորագրել են համաձայնություն ՀՎՀՀ-ն վճարման հանձնարարականներում, արդյունքում նաև բանկային քաղվածքներում արտացոլելու գործընթացին միանալու վերաբերյալ:

Միասնական գործընթացը մեկնարկել է 2026թ. մարտի 31-ին:

Համագործակցության շարունակական խորացում և ընդլայնում՝ ՀՀ պետական կառավարման համակարգի, քաղաքացիական հասարակության, միջազգային ու մասնավոր հատվածի հետ

ՀԲՄ-ն հաշվետու տարում հետևողականորեն զարգացրել է փոխգործակցությունը պետական մարմինների, միջազգային գործընկերների, մասնավոր հատվածի և կրթական հաստատությունների հետ՝ ստեղծելով արդյունավետ հարթակ երկխոսության, փորձի փոխանակման և երկարաժամկետ գործընկերության համար:

Պետական կառավարման մարմինների հետ համագործակցություն

ՀՀ Նախագահ

ՀԲՄ-ն ապահովել է կանոնավոր հաղորդակցություն և ներկայացրել բանկային համակարգին վերաբերող խնդիրները՝ նպաստելով պետության բարձրագույն մակարդակով ֆինանսական ոլորտի առաջնահերթությունների ճանաչմանը:



Կառավարություն

Պարբերական հանդիպումների շրջանակում ՀԲՄ-ն ներկայացրել է բանկային համակարգի ընթացիկ իրավիճակը և բարձրացրել ոլորտին առնչվող հիմնական մարտահրավերները: Միությունը ակտիվորեն ներգրավվել է **ապրիլի 18-ին և նոյեմբերի 30-ին կայացած «Երկխոսությունից գործողություն. գործարար միջավայրի բարելավումը քաղաքականությունների և դրանց իրականացման միջոցով»** խորագրով հանրային և մասնավոր հատվածների համատեղ աշխատաժողովների աշխատանքներին՝ մանրամասն ներկայացնելով բանկային համակարգի առջև ծառացած խնդիրները և առաջարկվող լուծումները՝ դատաիրավական և վարչաիրավական բարեփոխումների համատեքստում:

ՀՀ Կենտրոնական բանկ

ՀԲՄ-ն պահպանել է կառուցողական երկխոսություն ԿԲ-ի հետ, ապահովելով միասնական մոտեցումներ բանկային համակարգի կայունության, կանոնակարգային գործընթացների և ֆինանսական համակարգի զարգացման համար:

Ֆինանսների նախարարություն

ՀԲՄ-ն ակտիվորեն համագործակցել է հարկային քաղաքականությունների մշակման և վարչարարության բարելավման ուղղությամբ՝ կենտրոնանալով հարկային թափանցիկության բարձրացման և ոլորտային մարտահրավերների արդյունավետ կարգավորման վրա: Միությունը նպաստել է միասնական մոտեցումների ձևավորմանը և բանկային ոլորտի շահերի համակարգված ներկայացմանը՝ ապահովելով հարկային քաղաքականության արդյունավետություն և կայունություն:

Էկոնոմիկայի նախարարություն

ՀԲՄ-ն ակտիվորեն ներգրավված է եղել տնտեսական քաղաքականության մշակման, պետական աջակցության ծրագրերի և կառուցապատման ոլորտի բարեփոխումների գործընթացներում:

Միությունը նախաձեռնել և կազմակերպել է աշխատանքային հանդիպումներ Էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի բանկերի միջև՝ ապահովելով տեղեկատվության փոխանակման արդյունավետ հարթակ, նպաստելով համակարգված մոտեցումների կիրառմանը և բանկային համակարգի ու շուկայի ներդաշնակ զարգացմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀԲՄ-ն շարունակել է կառուցողական և նպատակային համագործակցությունը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացմանն ու ֆինանսական գործընթացների կարգավորմանը:

Հիմնական ուղղությունները ներառել են՝

- ✓ ՀԲՄ-ն շարունակել է կառուցողական և նպատակային համագործակցությունը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացմանն ու ֆինանսական գործընթացների կարգավորմանը:
- ✓ Կենսաթոշակային և հետվճարային ծրագրեր:
- ✓ Բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրեր– Միությունը աջակցել է ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների, սահմանամերձ բնակավայրերի և երեխաներ ունեցող ընտանիքների բնակարանային ծրագրերի իրականացման գործընթացին՝ ապահովելով բանկերի ներգրավվածությունը և ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Ֆինանսական զեղծարարություններից տուժած քաղաքացիների հարցերի ուսումնասիրության և լուծումների ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքներ:

Տարվա ընթացքում ՀԲՄ-ն հետևողական և համակարգված աշխատանք է իրականացրել ֆինանսական զեղծարարությունների հետևանքով տուժած քաղաքացիների խնդիրների ուսումնասիրության, ոլորտային ռիսկերի նվազեցման և բանկերի կողմից կիրառվող մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

ՀՀ ԱԺ հանձնաժողովների, պետական մարմինների և առևտրային բանկերի հետ իրականացվել է շարունակական համագործակցություն՝ ուղղված ինչպես յուրաքանչյուր անհատական դեպքի գնահատմանը, այնպես էլ համակարգային լուծումների ձևավորմանը: Բանկերին են փոխանցվել տուժած քաղաքացիների դիմումները, ստացվել են անհրաժեշտ պարզաբանումներ և գնահատվել են հնարավոր լուծումների տարբերակները:

Ակտիվ համագործակցություն միջազգային կառույցների հետ, մասնակցություն վերջիններիս շրջանակներում իրականացվող աշխատանքներին, այդ թվում՝ ՀԲՄ անդամ բանկերի համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության ստացում և տրամադրում, ՀՀ բանկերի ղեկավարների մասնակցության կազմակերպում միջազգային կառույցների կողմից կազմակերպվող քննարկումներին, սեմինարներին, կոնֆերանսներին և ուսուցողականծրագրերին:

ՀԲՄ-ն հաշվետու տարում հետևողականորեն զարգացրել է փոխգործակցությունը պետական մարմինների, միջազգային գործընկերների, մասնավոր հատվածի և կրթական հաստատությունների հետ՝ ստեղծելով արդյունավետ հարթակ երկխոսության, փորձի փոխանակման և երկարաժամկետ գործընկերության համար:

- **BACEE (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Բանկային Ասոցիացիա)**

Վիեննայում կայացած 50-րդ միջազգային բանկային համաժողովի շրջանակներում BACEE-ի և ՀԲՄ-ի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ տեղեկատվության և փորձի փոխանակում խթանելու, տարածաշրջանային ֆինանսական կայունություն ապահովելու և շուկայի զարգացմանն աջակցելու նպատակով: ՀԲՄ նախագահ Դանիել Ազատյանը պարգևատրվել է BACEE-ի կողմից միջազգային բանկային համագործակցության զարգացման ներդրման համար: Պարգևը հանձնել են BACEE-ի նախագահ Շանդոր Պատյին և գլխավոր քարտուղար Իշտվան Լենգյելը՝ ապրիլի 10-ին Բուդապեշտում կայացած BACEE 49-րդ միջազգային բանկային կոնֆերանսի շրջանակներում:

- **Հունաստանի բանկերի ասոցիացիա**

Երևանում կայացած միջազգային ֆորումի ընթացքում ստորագրված փոխըմբռնման հուշագիրը նպատակ ունի խորացնել երկկողմ համագործակցությունը՝ փորձի փոխանակում, կրթական և վերապատրաստման ծրագրերի համատեղ իրականացում, ինչպես նաև համատեղ նախաձեռնությունների ձևավորում կայուն ֆինանսական համակարգի աջակցման համար:

- **Լյուքսեմբուրգի բանկային ասոցիացիա**

ՀԲՄ-ն նախաձեռնել է համագործակցություն Լյուքսեմբուրգի բանկային ասոցիացիայի հետ՝ փորձի փոխանակման, միջազգային փորձառության ներմուծման և համատեղ կրթական ու մասնագիտական ծրագրերի իրականացման նպատակով:

- **Վրաստանի բանկային ասոցիացիա**

ՀԲՄ-ն շարունակել է սերտ համագործակցությունը Վրաստանի բանկային ասոցիացիայի հետ՝ նպաստելով տարածաշրջանային փորձի փոխանակմանը, և երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

Երկու կառուցները պարբերական կտրվածքով փոխանակվում են վերլուծական տվյալներով և հաշվետվություններով, որոնք վերաբերում են երկու երկրների բանկային համակարգերին, ներառյալ շուկաների համեմատական վերլուծությունը և ընթացիկ ֆինանսական ցուցանիշների գնահատումը:

Բանկային համակարգում ենթակառուցվածքային ու զարգացման ծրագրերի նախաձեռնում, իրականացմանն աջակցություն:

Հաշվետու տարում ՀԲՄ-ը շարունակական աշխատանք է տարել նաև գործող բանկային ենթակառուցվածքների արդյունավետության բարձրացման և համագործակցության ընդլայնման ուղղությամբ՝ գործընկերային ձևաչափով աշխատելով հետևյալ կառույցների հետ.

- **ԱրՔա վճարային համակարգ**
  - ✓ Աջակցություն ՀՀ վճարումների համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:
  - ✓ Մասնակցություն միասնական սակագնային քաղաքականության մշակման գործընթացներին:
  - ✓ Անկանխիկ գործարքներից տրամադրվող հետվճարների մեխանիզմների քննարկումների համակարգում:
  - ✓ Ներգրավվածություն ԱրՔա վճարային համակարգի կառավարման և ռազմավարական օրակարգի քննարկումներին
  - ✓ Բանկերի համախմբված դիրքորոշումների ներկայացում ԱրՔա խորհրդի նիստերին:
  - ✓ Թիրախավորված աշխատանքային հանդիպումների և ոլորտային քննարկումների կազմակերպում՝ բանկերի դիրքորոշումների համակարգման նպատակով:
- **ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ**
  - ✓ Ներգրավվածություն ԱՔՌԱ-ի կառավարման մարմնի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և դիրքորոշումների ձևավորման գործընթացներում:
  - ✓ Թիրախավորված աշխատանքային քննարկումների կազմակերպում՝ առանձին բանկերի կողմից բարձրացված համակարգային և գործառնական հարցերի շուրջ:
- **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ**
  - ✓ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի աշխատանքներում ՀԲՄ-ն մշտապես ներկայացրել է բանկերի կոլեկտիվ շահերը՝ համակարգելով նրանց մասնակցությունը:
  - ✓ Միությունը մասնակցություն է ունեցել Հիմնադրամի գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը:

- ✓ Բանկերի վերակառուցման նոր կարգավորումների և գործընթացների մշակման շրջանակում ՀԲՄ-ն ձեռնարկել է համապատասխան քայլեր՝ ապահովելու Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գործառույթների և դերակատարության դիտարկումը համակարգային մոտեցման ձևավորման համատեքստում:

- **Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**

- ✓ Մասնակցելով գրասենյակի կառավարման մարմնում ընթացող աշխատանքներին՝ ՀԲՄ-ն ապահովել է բանկերի շահերի միասնական ներկայացումը:

- ✓ Միությունը մասնակցել է խնդիրների քննարկմանը, ինչպես նաև համակարգել առանձին բանկերի կողմից բարձրացվող հարցերը՝ նպաստելով դրանց արդյունավետ և համակարգված լուծումների ներկայացմանը:

- **Տեղեկատվական անվտանգության/կիբերանվտանգության ոլորտի ծրագրեր**

- ✓ Աշխատանքային քննարկումներ, սեմինարներ ՀՀ առևտրային բանկերի, ՀՀ կենտրոնական բանկի և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության կիբերանվտանգության մասնագետների մասնակցությամբ՝ տեղեկատվական անվտանգության ոլորտում վեր հանված հիմնախնդիրները խորը մասնագիտական մակարդակում քննարկելու և հնարավոր լուծումներ գտնելու նպատակով:

- ✓ Ակտիվ ներգրավվածություն կիբերզորավարժությունների կազմակերպման և իրականացման գործընթացներում:

- ✓ Միությունը մասնակցել է «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի», «Հանրային տեղեկությունների» և «Կիբերանվտանգության» վերաբերյալ օրենսդրական նախագծերի քննարկումներին՝ ներկայացնելով բանկերի դիտարկումները և առաջարկությունները:

Հանրային կապերի միջոցով ՀՀ բանկային համակարգի բարի համբավի և ինստիտուցիոնալ դիրքի բարձր նշաձողի ընդհանրական ապահովումն ու բարձրացումը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀԲՄ հանրային կապերի մասով գործունեությունն ուղղված է եղել բանկային համակարգի ինստիտուցիոնալ դիրքի և բարի համբավի ամրապնդմանը, ինչպես նաև համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Նպատակային հանրային հաղորդակցության, տեղական և միջազգային գործընկերային հարթակներում ակտիվ ներգրավվածության արդյունքում՝ բանկային համակարգը դիրքավորվել է որպես կայուն, նորարարական և սոցիալապես պատասխանատու համակարգ:

Ստորև ներկայացվում են նշված առաջնահերթության շրջանակում իրականացված հիմնական նախաձեռնություններն ու միջոցառումները:

«Բանկային համակարգի ապագան. նորարարությունների կայուն զարգացում և հեռանկարներ» խորագրի ներքո ընթացող ամենամյա միջազգային ֆորում

BANKING FORUM
THE FUTURE OF BANKING:
INNOVATIONS SUSTAINABILITY, AND PERSPECTIVES
23-24 September, 2025

2025թ.-ին Ֆորումն անցկացվեց սեպտեմբերի 23-24-ը, ՀԲՄ 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Այս տարվա ֆորումը բացառիկ էր ոչ միայն մասնակիցների թվով, այլև քննարկվող թեմաների լայն շրջանակով:

Իրենց ներկայությամբ ֆորումը պատվել են մեր միջազգային գործընկերները, մասնավորապես ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ավստրիայից, Գերմանիայից, Լյուքսեմբուրգից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Լեհաստանից, Հունաստանից և Վրաստանից:

MR. HAYK
YESAYAN

MR. ARTAK
PETROSYAN

UNION OF BA

Banking at Crossroads

MITIGATING SANCTIONS CIRCUMVENTION RISKS IN BANKING

ՀԲՄ նախաձեռնությամբ կայացած Բանկային երկօրյա ֆորումի շրջանակում կայացել է Հայաստանի Բանկերի Միության 30-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր երեկոն և «Միասնություն, որ ստեղծում է արժեքներ» փաստավավերագրական ֆիլմի պրեմիերան:

ՀԲՄ մարզային համաժողովներ

Ապրիլի 2, 2025 - Արագածոտնի մարզ

«ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման հնարավորություններն ու հեռանկարները» թեմայով համաժողովի նպատակն էր ներկայացնել ՀՀ բանկերի սեփական ռեսուրսներով և տարբեր միջազգային ծրագրերով իրականացված ՓՄՁ վարկավորման ծրագրերը և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև ֆինանսական հասանելիության ընդլայնման հնարավորությունները՝ թվայնացման և տեխնոլոգիական նորարարությունների միջոցով:

Հոկտեմբերի 31, 2025 - Սյունիքի մարզ

«Սյունիքի մարզում բիզնեսի և բանկային համակարգի համագործակցության հնարավորությունները և հեռանկարները» թեմայով համաժողովի նպատակն էր քննարկել մարզի բիզնես միջավայրի առանձնահատկությունները և հնարավորությունները, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերի դերը ՓՄՁ զարգացման գործում: Համաժողովի մեկնարկել է «Բանկերը մեկ տեղում» էքսպոյով, որտեղ մարզի բնակիչներն ու ձեռնարկատերերը հնարավորություն են ունեցել անմիջապես շփվելու բանկերի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու համագործակցության նոր ուղղություններն ու նախաձեռնությունները:

- **Բանկային համակարգի աջակցության շնորհիվ հաջողության հասած բիզնեսների հաջողության պատմությունների պատրաստում և հանրայնացում**

Մարզային համաժողովներին ընդառաջ ՀԲՄ կողմից նկարահանվել են տեսաֆիլմեր՝ նվիրված տվյալ մարզում բիզնես վարկավորման հաջողված պատմություններին:

• **«Հայկական բանկային օրեր Վիեննայում»**

Հայաստանի բանկերի միության նախաձեռնությամբ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում «Raiffeisen International» բանկային կորպորացիան առաջին անգամ անցկացրել է «Հայկական բանկային օրեր» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված Հայաստանի և Եվրոպայի ֆինանսական ոլորտների համագործակցության խորացմանը:

• **Եռակողմ հուշագիր՝ Լոռու մարզում 100 հա նոր անտառ հիմնելու նպատակով**

ՀՀ կենտրոնական բանկը, Հայաստանի բանկերի միությունը և «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ն ստորագրեցին եռակողմ հուշագիր՝ 3 տարվա ընթացքում Լոռու մարզի Փամբակ համայնքում հիմնելու 100 հա նոր անտառ, որտեղ կտնկվի 300,000 տեղական անտառային տեսակի ծառ:

- **Մասնակցություն Երևանում հյուրընկալված Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի (BSTDB) Կառավարիչների խորհրդի 27-րդ տարեկան նիստի շրջանակներում կայացած «Հայաստան. խթանելով տարածաշրջանային հաջողությունը» խորագրով գործարար համաժողովին:**

ՀԲՄ նախագահ Դանիել Ազատյանի մասնակցությամբ կայացած «Գործընկերություն Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հետ. տեսակետներ և փորձառություն» թեմայով քննարկումն ուղղված էր ՍԱՋԲ հետ համագործակցող պետական և մասնավոր հատվածների փորձի և տեսակետների փոխանակմանը:

- **Հայաստանի բանկերի միության և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) համագործակցության շրջանակում տեղի ունեցավ «Banking on Nature in Armenia» խորագրով մասնագիտացված աշխատաժողովը՝ ՀՀ առևտրային բանկերի, ոլորտի փորձագետների և միջազգային գործընկերների մասնակցությամբ:**

Աշխատաժողովի նպատակն էր խթանել ֆինանսական համակարգի դերակատարումը կենսաբազմազանության պահպանման գործում՝ զարգացնելով մասնակիցների մասնագիտական կարողությունները ոլորտի նորագույն մոտեցումների վերաբերյալ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին նաև ներդրումային նոր հնարավորություններ և ֆինանսական նորարարական գործիքներ, որոնք միտված են բնության վրա դրական ազդեցություն ունեցող նախագծերի ֆինանսավորմանը:

- **Աջակցության ծրագրեր**

Ֆիզմաթ դպրոց. Աջակցություն աշակերտներին և մասնագետներին, ովքեր մասնակցում են միջազգային օլիմպիադաներին և կրթական մրցույթներին՝ նպաստելով համակարգային և մրցունակ մարդկային կապիտալի ձևավորմանը և Հայաստանի միջազգային ներկայության ամրապնդմանը:

- ✓ Աջակցություն ԵՊՀ-ին՝ «Փոխակերպվող տնտեսություն. մարդկային կապիտալի զարգացում, ստեղծարար նորարարական տնտեսություն, կայուն ներառական աճ» խորագրով երկրորդ միջազգային գիտաժողովի կազմակերպման նպատակով:

- ✓ Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ անցկացվել է շախմատի մրցաշար Ֆինանսաբանկային կազմակերպությունների միջև:
- ✓ Աջակցություն ԵՊՀ-ին՝ «Փոխակերպվող տնտեսություն. մարդկային կապիտալի զարգացում, ստեղծարար նորարարական տնտեսություն, կայուն ներառական աճ» խորագրով երկրորդ միջազգային գիտաժողովի կազմակերպման նպատակով:

Տարեսկզբին և առաջին կիսամյակի ավարտին կազմակերպվել են մամլո ասուլիսներ: Ներկայացվել են համապատասխանաբար ՀՀ բանկային համակարգի գործունեության 2024թ. ամփոփ և 2025թ. առաջին կիսամյակի արդյունքներն ու ընթացիկ ցուցանիշները:

Regional Post - Caucasus ամսագրին տված հարցազրույցում ՀԲՄ նախագահին անդրադարձել է բանկային համակարգի կայացման ու զարգացման, թվային տրանսֆորմացիաների, միջազգային ֆինանսական ասպարեզում հայկական բանկերի աճող դերակատարության, ինչպես նաև ՀԲՄ գործունեության մասին:

Հարցազրույցը EconoMIX հաղորդմանը՝ Հայաստանի բանկային համակարգի զարգացման փուլերի, ներկա վիճակի և ապագայի միտումների վերաբերյալ:

Բանկային համակարգին առնչվող խնդիրներին լուծումներ ապահովելու պրոֆեսիոնալ իրագործման հիմքի ապահովում՝ հետազոտությունների ու մեթոդաբանությունների մշակման և միջազգային փորձի ուսումնասիրությունների միջոցով:

ՀԲՄ հետազոտական գործունեության առանցքն է հանդիսանալ պրոֆեսիոնալ վերլուծական հարթակ՝ ՀՀ բանկային համակարգի առաջ ծառացած հիմնախնդիրների բազմակողմանի ուսումնասիրման, դրանց պատճառահետևանքային կապերի բացահայտման և իրատեսական քաղաքականությունների ու գործնական լուծումների ձևակերպման համար:

ՀԲՄ կողմից ՀՀ բանկային համակարգին վերաբերող հետազոտությունները տարվում են ՀԲՄ խորհրդի կողմից առաջադրվող ընթացիկ գործնական համակարգային խնդիրների պարզաբանման ու լուծման առաջարկությունների մշակման շուրջ:

Հետազոտությունների թեմաները վերաբերել են՝

- ✓ տնտեսության զարգացման մեջ բանկային համակարգի դերին, որոնք պարբերաբար ներկայացվել են ՀԲՄ նախագահի կողմից տարբեր պանելային քննարկումներում, հարցազրույցներում, ինչպես նաև ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների հետ ունեցած հանդիպումների ընթացքում:
- ✓ պետություն-բանկային համակարգ համագործակցության շրջանակներում առևտրային բանկերի ունեցած մասնակցությանը, որի ամփոփ տվյալները պարբերաբար հրապարակվել են ՀԲՄ կայքէջում և ներկայացվել պետական գերատեսչությունների հետ հանդիպումների ընթացքում:
- ✓ ֆինանսական համակարգի կանոնակարգման ազդեցությունների վերհանմանը, որոնք ձևակերպվել են որպես առաջարկների փաթեթ և ներկայացվել ՀՀ կենտրոնական բանկին:
- ✓ հարկային վարչարարության ոլորտում նախատեսվող փոփոխությունների ազդեցություններին, որոնք տրամադրվել են համապատասխան պետական գերատեսչություններին՝ ոլորտային քաղաքականությունների մշակման և ներդրման համար:
- ✓ Հայաստանի և Վրաստանի բանկային համակարգերի համեմատական վերլուծության, որը պարբերաբար հրապարակվել է ՀԲՄ կայքէջում:
- ✓ Բանկային վիճակագրական ցուցանիշների հաշվետվությունների մշակման, եռամսյակային վերլուծությունների իրականացման աշխատանքներ: Եռամսյակային պարբերականությամբ հրապարակվել է «Բանկային համակարգը թվերով» վիճակագրական պրոդուկտը:

- **Կայուն ֆինանսների և «կանաչ» ֆինանսավորման խթանման հիմքերի ձևավորում**

Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի բանկերի միությունը ՀՀ Կենտրոնական բանկի և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել է սեմինարներ և աշխատանքային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել ESG սկզբունքների ներդրման և կայուն ֆինանսավորման լավագույն միջազգային փորձին: Բանկային ֆորումի շրջանակում առանձնակի շեշտադրվել է ESG մոտեցումների կիրառման կարևորությունը և հաստատվել է սերտ համագործակցություն ՀՀ բանկերի և միջազգային գործընկերների միջև այս թեմաների շուրջ:

Նախատեսվում է, որ 2026թ. ընթացքում ՀԲՄ-ն կմեկնարկի **ESG HUB**-ի ստեղծման գործընթացը, որը կհանդիսանա մշտական հարթակ փորձի փոխանակման, գիտելիքների կենտրոնացման և կայուն ֆինանսավորման գործիքների ներդրման խթանման համար: Այդ համատեքստում նախատեսվում է շարունակել անդամ բանկերի մասնագիտական կարողությունների զարգացումը, համապատասխան քաղաքականության և ստանդարտների մշակումը, ինչպես նաև համագործակցությունը պետական և միջազգային կառույցների հետ՝ ֆինանսական շուկայի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով:

B ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի բանկերի միության Ուսումնական կենտրոնը իր առաքելության շրջանակներում 2025թ-ին իրականացրել է շարք ծրագրեր՝ ուղղված ֆինանսաբանկային աշխատակիցների մասնագիտական զարգացմանը:

Առանձնակի շեշտադրությամբ հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում Կենտրոնի կողմից արձանագրվել են ձեռքբերումներ, ընդլայնվել է համագործակցող գործընկերների ցանկը, որոնց հետ համատեղ իրականացվել են ֆինանսաբանկային աշխատակիցների մասնագիտական աճին խթանող մի շարք ծրագրեր:

Ավելի քան 15 դասընթաց առաջին անգամ հավատարմագրվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից՝ որպես Շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) դասընթացներ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են վարպետաց դասեր բացառապես ղեկավարների համար միջազգային գործընկեր-կառույցների ներգրավմամբ հետևյալ ուղղություններով՝

- Բլոկչեյն և թվային ակտիվներ:
- Արբիտրաժը ֆինանսական վեճերի լուծման գործում:
- ՓԼ/ԱՖ ռիսկերի պատասխանատու կառավարում, պաշտպանության երեք բնագծերի արդյունավետ համագործակցություն-CIPE կազմակերպության ներգրավմամբ: Ծրագրի եզակիությունը պայմանավորվում է նրանով, որ դասընթացների ավարտից հետո մեկ ամսյա ժամկետում մասնակիցներին մատուցվել է խորհրդատվություն՝ անհատական մոտեցմամբ կառույցի խնդիրներին անդրադառնալու և հնարավոր լուծումներ առաջադրելու նպատակով:
- Ֆինանսական հաստատություններում շահերի բախման նկատմամբ խորհուրդի վերահսկողություն: Ծրագիրը կազմակերպվել է բացառապես խորհրդի անդամների համար՝ ATTF-House of Training կազմակերպության ներգրավմամբ:

Ընդհանուր առմամբ, կազմակերպվել է շուրջ 60 վերապատրաստման դասընթաց, որոնց մասնակցել է ավելի քան 750 մասնակից Հայաստանի բոլոր առևտրային բանկերից, ինչպես նաև շուրջ 45 այլ ֆինանսական և գործընկեր կառույցներից:

Որպես դասընթացավարներ՝ հրավիրվել են Հայաստանի և արտերկրների փորձագետներ, ֆինանսաբանկային ոլորտը ներկայացնող ակնառու ներկայացուցիչներ:

Կազմակերպվել են բանկային համակարգի տարբեր ոլորտներին առնչվող համապարփակ մասնագիտացված դասընթացներ, որոնք ներառել են հետևյալ թեմատիկ ուղղություններն ու ոլորտները՝

Վարկային վերլուծություն, Ռիսկերի կառավարում, Ֆինանսներ և բյուջետավորում, ՓԼ/ԱՖ, Արհեստական բանականություն և թվային տեխնոլոգիաներ, Իրավական հիմնախնդիրներ, Հարկային օրենսդրություն, Գանձապահների ուսուցում, Բիզնես և վաճառքի հմտություններ, բանակցություններ, Առաջնորդության հմտություններ, PR և հեղինակության ամրապնդում, Բլոկչեյն և թվային ակտիվներ, ԱՄՆ պատժամիջոցներ, Սպասարկման ոլորտ, Բողոքների կառավարում, Կիբեռ անվտանգություն, Համապատասխանություն, Արժեթղթերի պահառության ծառայություններ և այլն:

ՀԲՄ ուսումնական և որակավորման կենտրոնի կողմից տարվել են նաև ակտիվ աշխատանքներ միջազգային գործընկեր կառույցների հետ՝ վերջիններիս կողմից առաջարկվող կրթական և որակավորման ծրագրերը արտոնյալ պայմաններով ֆինանսաբանկային աշխատակիցներին հասանելի դարձնելու նպատակով.

- ✓ Frankfurt School of Finance and Management
- ✓ ATTF-House of Training
- ✓ OECD-INFE ֆինանսական գրագիտությանն ուղղված ծրագրեր
- ✓ IFC-SBFN-համաժողովներ, վեբինարներ

Միջազգային հեղինակավոր կառույցների կողմից կազմակերպվող կրթական ծրագրերին հասանելիության ապահովում

- **EBTN (European Banking and Financial Services Training Association)՝**

Եվրոպայի առաջատար մասնագիտական կազմակերպության հետ մեր երկարատև, հետևողական և խորքային համագործակցության արդյունքում 2025թ. մարտի 21-ին հաստատվեց «Բանկային գործ» որակավորման ծրագրի հավատարմագրումը: Ծրագրի շրջանակում կազմակերպվել է երկու ամիս տևողությամբ երեք ամբողջական դասընթացներ, որոնց մասնակցել է շուրջ 100 մասնակիցներ՝ ներառյալ ՀՀ բանկային համակարգի և ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների աշխատակիցներ, ինչպես նաև մասնագիտական ու ոչ մասնագիտական ԲՈՒՀ-երի շրջանավարտներ, ովքեր հետաքրքրված են ոլորտում իրենց կարիերայի կառուցմամբ:

2024թ.-ին ՀԲՄ կողմից **EFPA (European Financial Planning Association)**-ի հետ վարած ակտիվ քննարկումների, բանակցությունների և հանդիպումների արդյունքում 2025 թ. ապրիլին 17-ին ստորագրվեց համագործակցության պայմանագիր միջազգային այս հեղինակավոր կառույցի հետ՝ **«EFPA Հայաստան»** ծրագրի ստեղծման և միջազգային որակավորումների Հայաստանում ներկայացնելու վերաբերյալ:

EFPA-ն Եվրոպայում ունի մեծ ճանաչում, ունի ավելի քան 100,000 հավաստագիր կրող և միջազգային այս որակավորումների հասանելիության ապահովումը Հայաստանում շատ կարևոր դեր ունի ֆինանսաբանկային համակարգում նոր չափորոշիչներ ներդնելու համար: EFPA որակավորումները Եվրամիությունից դուրս առաջին անգամ ներկայացվում են միայն Հայաստանում:

Ֆինանսական խորհրդատուների և պլանավորողների համար առաջարկվում են 4 փուլերից բաղկացած ստորև որակավորումները՝

- ✓ **EFPA European Investment Assistant®**
- ✓ **EFPA European Investment Practitioner®**
- ✓ **EFPA European Financial Adviser®**

  EFPA European Financial Planner®

EFPA ESG Advisor® որակավորումը տալիս է ESG թեմաների մասին համապարփակ պատկերացում և գործնական հմտություններ՝ ներդրումային խորհրդատվության, պորտֆելի կառուցման և հաճախորդների տարբեր պրոդուկտների սպասարկման մեջ շրջակա միջավայրի, սոցիալական պատասխանատվության և կառավարման (ESG) չափանիշների արդյունավետ ներառման համար:

Տարեվերջյան արդյունքներով ծրագրի մասնակից են եղել ֆինանսաբանկային համակարգի ավելի քան 120 մասնագետներ, որոնցից միջազգային հավաստագրեր են ստացել 87-ը:

ՀԲՄ կողմից կողմից շարունակվում են ակտիվ քննարկումներն ու աշխատանքները EFPA Europe-ի գործընկերների հետ՝ 2026թ-ին նոր որակավարումներ ներդնելու և նոր ստանդարտներ սահմանելու ուղությամբ:

ՀԲՄ Ուսումնական կենտրոնի ծրագրերին մասնակցած գործընկեր կազմակերպություններ

2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԹՎԵՐՈՎ

2025

Բանկային համակարգը՝ հանդիսանալով ֆինանսական համակարգի խոշորագույն հատվածը, 2025թ. հետամուտ է եղել իր ռազմավարական խնդիրների իրագործմանը տարին ամփոփել է կապիտալի իրացվելիության բարձր պաշարներով՝ երաշխավորելով համակարգի դիմակայունությունը հնարավոր ցնցումների նկատմամբ:

Արագ փոփոխվող զարգացումներով անորոշություններով բնութագրվող ներկայիս իրավիճակում բանկային համակարգը շարունակել է կայուն զարգացումը ապահովելով ֆինանսական միջնորդության բնականոն ընթացքը:

Համապատասխան ցուցանիշների վերլուծությունը հերթական անգամ հավաստում է համակարգի կայունությունն ու հուսալիությունը, ինչպես նաև վերջինիս շարունակական զարգացման կատարելագործման տրամաբանությունը: Ըստ այդմ՝ 2025թ. ՀՀ առևտրային 17 բանկերի տարեկան ընդհանուր կապիտալն ավելացել է շուրջ 22.4%-ով՝ կազմելով 2 175 մլրդ ՀՀ դրամ:

Առևտրային բանկերի միջև ծավալվել է առողջ մրցակցություն: 5 ամենախոշոր բանկերի ակտիվները կազմում են բանկային համակարգի ակտիվների 60.5% և ընդհանուր կապիտալի 59%:

Բանկերն էապես դիվերսիֆիկացված են ըստ հաճախորդների սեգմենտների, առանձին մասնագիտացված ուղղությունների, կապիտալի միջազգային ու ներքին պատկանելության:

Բանկային ակտիվների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 12 տրլն ՀՀ դրամ՝ հատելով ՀՆԱ-ն: Տարվա ընթացքում պահպանվել է բանկային համակարգի վարկային պորտֆելի ավանդների բնականոն աճի դինամիկան:

Տարվա ընթացքում վարկային շուկայում արձանագրվել է ակտիվության աճ, ինչի արդյունքում վարկերի աճի տեմպը տարեվերջին կազմել է շուրջ 23%: Վարկային պորտֆելի աճը հավասարապես պայմանավորվել է տնային տնտեսությունների և բիզնես վարկերի աճով:

2025թ. պարտավորությունների ցուցանիշներում մեծ տեսակարար կշիռ ունեն հաճախորդներից ներգրավված միջոցները, որոնք աճել են 994 մլրդ ՀՀ դրամով և կազմել են 7 458 մլրդ ՀՀ դրամ:

2025թ. բանկային համակարգն ամփոփել է շահութաբերությամբ՝ ապահովելով 421 մլրդ ՀՀ դրամ շահույթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մլրդ. ՀՀ դրամ



Ընդհանուր ակտիվներն 2025թ-ին ավելացել են շուրջ 1 824 մլրդ ՀՀ դրամով կամ 16.6%-ով:

Վարկային պորտֆելն 2025թ-ին ավելացել է շուրջ 1 474 մլրդ դրամով կամ 23.0%-ով:

Ընդհանուր կապիտալն 2025թ-ին ավելացել է շուրջ 398 մլրդ ՀՀ դրամով կամ 22.4%-ով:

ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.12.2025թ.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

3 438 մլրդ. ՀՀ դրամ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

3 731 մլրդ. ՀՀ դրամ

ԱՅԼ ՖԻՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

416 մլրդ. ՀՀ դրամ

ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ

31.12.2025թ.

Մլն. ՀՀ դրամ



* Տոկոսը (%) ցույց է տալիս մասնաբաժինը ընդհանուր պորտֆելում

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2024Թ.-Ի ՀԱՄԵՄԱՏ



ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ֆիզիկական անձանց 1-5 տարի ժամկետով վարկերի տոկոսադրույքներ



Ֆիզիկական անձանց 5 տարուց ավել ժամկետով վարկերի տոկոսադրույքներ



Ֆիզիկական անձանց 1-5 տարի ժամկետով վարկերի տոկոսադրույքը ՀՀ դրամով 2025թ-ի դեկտեմբերին 2024թ-ի դեկտեմբերի համեմատ ավելացել է 0,4%-ով, դոլարով վարկերինը նվազել 0,7%-ով 1,1%-ով:

Ֆիզիկական անձանց 5 տարուց ավելի ժամկետով վարկերի տոկոսադրույքները ՀՀ դրամով 2025թ-ի դեկտեմբերին 2024թ-ի դեկտեմբերի համեմատ ավելացել է 1,2%-ով, դոլարով վարկերինը նվազել է 2,2%-ով:

ԴՐԱՄՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԿԵՐՈՒՄ



ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՎԱՆԴՆԵՐ

Մլրդ. ՀՀ դրամ



Ընդհանուր պարտավորություններն 2025թ-ին ավելացել են շուրջ 1 426 մլրդ ՀՀ դրամով կամ 15.5%-ով:

Ընդհանուր ավանդներն 2025թ-ին ավելացել են շուրջ 994 մլրդ ՀՀ դրամով կամ 15.4%-ով:

ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐ

Մլրդ. ՀՀ դրամ



2025թ-ին ռեզիդենտների ավանդներն ավելացել են շուրջ 906 մլրդ ՀՀ դրամով կամ 18.2%-ով:

ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐ

Մլրդ. ՀՀ դրամ



2025թ-ին ոչ ռեզիդենտների ավանդներն ավելացել են շուրջ 89 մլրդ ՀՀ դրամով կամ 6.0%-ով:

ԴՐԱՄՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԱՆԴՆԵՐՈՒՄ



ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ֆիզիկական անձանց 181 օրից 1 տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքներ



Ֆիզիկական անձանց 1-5 տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքներ



Ֆիզիկական անձանց 181 օրից 1 տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքը ՀՀ դրամով 2025թ-ի դեկտեմբերին 2024թ-ի դեկտեմբերի համեմատ ավելացել է 0.3%-ով , իսկ դոլարով ավանդների տոկոսադրույքը՝ 1.1%-ով:

Ֆիզիկական անձանց 1-5 տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքը ՀՀ դրամով 2025թ-ի դեկտեմբերին 2024թ-ի դեկտեմբերի համեմատ ավելացել է 0.2%-ով, դոլարով ավանդների տոկոսադրույքը մնացել է անփոփոխ՝ կազմելով 4.2%:

ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ



2025թ-ին բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի ծավալը ավելացել է 18 մլրդ ՀՀ դրամով կամ 3.5%-ով:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ



2025թ-ին արժեթղթերում ներդրումները ավելացել են շուրջ 194 մլրդՀՀ դրամով կամ 9.0%-ով:

ՇԱՀՈՒՅԹ

Մլրդ. ՀՀ դրամ



2025թ-ին բանկային համակարգն ապահովել է 421 մլրդ ՀՀ դրամի շահույթ, որը 2024թ-ի համեմատ ավելացել է շուրջ 60 մլրդ ՀՀ դրամով կամ 17%-ով:

ԵԿԱՄՈՒՏ-ԾԱԽՍ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

	01.01.2024-31.12.2024	01.01.2025-31.12.2025	Փոփոխությունը (աճ/նվազ. 01/01/2025-31/12/2025 01/01/2024-31/12/2024 համեմատ)	
			Բացարձակ	(%)
Զուտ տոկոսայինեկամուտ	502	619	117	23.3
Ոչ տոկոսային եկամուտ	351	360	9	2.6
Ոչ տոկոսային ծախս	(376)	(430)	(54)	14.4
Զուտ մասհանումներ պահուստին	(38)	(36)	2	(5.3)
Շահութահարկի գծով ծախս	(78)	(92)	(14)	18.0
Զուտ Շահույթ	361	421	60	17.0

Դիտարկելով շահույթի կառուցվածքը կարելի է նկատել, որ 2025թ-ին ընթացքում բանկային համակարգի շահույթի աճն հիմնականում պայմանավորված է եղել զուտ տոկոսային եկամտի 23.3% աճով:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

մլն. ՀՀ դրամ



մլն. ՀՀ դրամ



2025թ-ին ՀՀ առևտրային բանկերի կողմից վճարվել է շուրջ 164.6 մլրդ ՀՀ դրամ հարկ, որը 2024թ-ի նույն ժամանակահատվածում համեմատ ավելացել է շուրջ 45 մլրդ դրամով կամ 37.6%-ով: Միևնույն ժամանակ, 2025թ-ին բանկերի կողմից վճարված հարկերի մասնաբաժինը ընդհանուր հարկերում կազմել է 8.5%, որը 2024թ-ի նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 1.8%-ով:

Անրադառնալով ընդհանուր հարկերի կառուցվածքին կարելի է նկատել, որ բանկերի կողմից վճարված շահութահարկը 2025թ.-ին կազմել է 1000 խոշոր հարկատուների կողմից վճարված ընդամենը շահութահարկի 29.2%, որը 2024թ-ի նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 4.3%-ով:

ԱԿՏԻՎՆԵՐ/ՀՆԱ, ՎԱՐԿԵՐ/ՀՆԱ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐ/ՀՆԱ

2015-2025



ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹԻՎԸ

31.12.2025

546

ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ



Բանկերի մասնաճյուղերի քանակը 2025թ. -ին 2024թ. համեմատ ավելացել է 6-ով, իսկ 2015թ. համեմատ՝ 22-ով:

16 787

ԲԱՆԿԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹԻՎԸ



Բանկերի աշխատակիցների միջին թիվը 2025թ.-ին 2024թ. համեմատ ավելացել է 963-ով, իսկ 2015թ. համեմատ՝ 5 301-ով:

ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՐԶԵՐՈՒՄ

31.12.2025

275

ԵՐԵՎԱՆ

271

ՄԱՐԶԵՐ

Բանկերի մասնաճյուղերի քանակը Երևանում 2025թ.-ին 2024թ. համեմատ ավելացել է 2-ով, իսկ ՀՀ մարզերում նվազել է 4-ով: